Կազմված է 16.06. 2019թ
ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«16» ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«15» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.172.871878

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02263716

«15» 09 2015Թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ
001-2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«16» օգոստոսի 2019 Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳԻՐ

(Նոր խմբագրություն)

Երևան-2019թ.

Նախաբան

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գործունեության հիմնական նպատակն է հայության մարդկային, տնտեսական, ֆինանսական, մտավոր ներուժի կամ նրա հիմնական մասի կենտրոնացումը Հայաստանի Հանրապետության տարածքում և այդ ներուժի անվտանգության ու բնականոն զարգացման ապահովումը:

Կուսակցության գործունեությունը միտված է առաջիկա 20 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը կրկնապատկելուն, ինչը ոչ թե մարդկանց կուտակման մեխանիկական գործողություն է, այլ երկրի բովանդակային վերակառուցման արդյունք: Մարդու ազատության և արժանապատվության պաշտպանությունը, ստեղծարար ընդունակությունների և կրթության քաջալերումը, իրավունքի և օրինականության վրա հիմնված ազգային միասնությունը պիտի դառնան այն գործոնները, որ կհանգեցնեն տեսանելի արտագաղթի դադարեցման, ծնելիության աճի, Հին և Նոր Սփյուռքի հայերի՝ դեպի Հայաստան հարաճուն հայրենադարձության:

Երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն. այս ուղենիշներով է առաջնորդվում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

Իր ծրագիրն իրագործելու համար Կուսակցությունը մտադիր է զարգանալ որպես ինստիտուցիոնալ հանրային-քաղաքական կառույց՝ համախմբելով նշյալ նպատակներին, կուսակցության ծրագրին համախոհ ՀՀ քաղաքացիների, որոնք մասնակից կլինեն Հայաստանի Հանրապետության՝ առաջիկա 20 տարիների զարգացման ճանապարհային քարտեզի իրագործմանը:

Կուսակցությունն առաջնային է համարում 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության արժեքների ամրագրումը՝ որպես հանրային և ազգային հարաբերությունների հիմք և հեղափոխության գաղափարների իրագործումը՝ որպես մշտական քաղաքական իրողություն:

Այս իմաստով առանցքային նշանակություն ունեն՝

- Մարդու իրավունքների պաշտպանվածությունը և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը:
- Իրավունքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության վրա հիմնված ազգային միասնությունը և քաղաքացիական համերաշխությունը:
- Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովումը, Հայաստանի և Արցախի անվտանգության մակարդակի շարունակական բարձրացումը:
- Իշխանության մարմինների ձևավորումը բացառապես ժողովրդի ազատ կամարտահայտման միջոցով:
- Բռնությունից զերծ հանրության հաստատումը և բռնության հանրային մերժումը:
- Կոռուպցիայի հանրային մերժումը և կոռուպցիայից զերծ հանրությունը, քաղաքականության և բիզնեսի գործնական տարանջատումը:

- Արհեստական տնտեսական մենաշնորհների բացառումը, տնտեսական մրցակցության պաշտպանությունը, տնտեսական որևէ գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությունը:

- Տնտեսության ներառական աճի ապահովումը, աշխատատեղերի ստեղծումը, աղքատության հաղթահարումը աշխատանքի և կրթության քաջալերման միջոցով:

- Հանրության կրթական և սոցիալական ապահովության մակարդակի շարունակական բարձրացումը:

- Շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը:

Ըստ այդմ, կուսակցության նպատակն է հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

---

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները ձգտում են հասնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հասարակական, քաղաքական, իրավական, կենցաղային նոր հարաբերությունների հաստատմանը՝ հիմնված օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարության, Մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության և կիրառելիության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, Հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնուրույնության և ինքնիշխանության պահպանման և զարգացման, Հայաստանի՝ Հայ ժողովրդի բնակության և զարգացման լավագույն և ամենագերադասելի վայրի կարգավիճակը վերահաստատելու հրամայականների վրա: Կուսակցության անդամները և աջակիցները համաձայն են համատեղել ջանքերը սույն Ծրագրում ամրագրված նպատակների և խնդիրների իրագործման համար:

2. Կուսակցության անդամներն ընդունում են, որ անհատի վերափոխումը հանրային վերափոխման կարևորագույն գործոն է: Կուսակցությանն իրենց անդամագրվելու պահը համարում են մի զրոյական-հաշվարկային կետ, որից յուրաքանչյուրը սկսում է հանրային վերափոխման գործընթաց՝ այդ նպատակին միտված կարևորագույն անելիքներից մեկը համարելով սեփական անձի վերափոխումը: Կուսակցությանն անդամագրվելն ինքնահայեցման, հանրային և սեփական-անհատական արատների պատճառահետևանքային կապը դիտարկելու, սեփական-անհատական արատները զննելու և դրանցից ձերբազատվելու, հանրային արատներն արմատախիլ անելու համար համատեղ պայքարելու պատրաստակամություն է: Կուսակցության անդամը սեփական անձի զարգացումը՝ հմտությունների, գիտելիքների, իմացության ձեռքբերումն ու կատարելագործումը դիտարկում է իբրև հանրային բարեփոխումների զարգացման կարևորագույն բաղադրիչ:

3. Կուսակցության անդամը հռչակում է իր հետևյալ պարտավորությունները.

3.1. Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ լայնածավալ ռազմական հարձակման պարագայում, ըստ անհրաժեշտության, զինվորագրվել Հայրենիքի պաշտպանության գործին, ինչը նշանակում է որպես կամավոր մեկնել ռազմական գործողությունների գոտի կամ զբաղված լինել գործունեության այնպիսի տեսակով, որն ուղղակիորեն ծառայում է Հայաստանի ռազմական հաջողության ապահովմանը:

3.2. Առանց ժամկետների սահմանափակման հետամուտ լինել 2008թ. մարտի 1-ի սպանությունների և 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության ամբողջական, ինչպես նաև հանրային հնչեղություն ունեցող բոլոր հանցագործությունների բացահայտմանը:

3.3. Առանց ժամկետների սահմանափակման հետամուտ լինել անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր համապետական ընտրությունների արդյունքների կեղծված լինելու վերաբերյալ հայտարարությունների անաչառ գնահատմանը:

3.4. Առանց ժամկետների սահմանափակման հետամուտ լինել երբևէ Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի, կառավարության անդամի, ԱԺ պատգամավորի, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների, դատախազության և այլ բարձրաստիճան ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձանց, դատավորների և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքային վիճակի ուսումնասիրությանն ու վերլուծությանը, դրանց հրապարակմանը և սրանից բխող օրենսդրական քայլերի ձեռնարկմանը, որ կներառեն նաև այնպիսի մեխանիզմներ, որոնք հանրությանը հնարավորություն կտան ընթացիկ վերահսկողության տակ պահել պաշտոնյաների և նրանց հետ փոխկապակցված անձանց ունեցվածքն ու եկամուտները:

4. Կուսակցության անդամները համաձայն են, որ՝

4.1. Հայաստանի Հանրապետության, որպես պետության հիմնական ազգային գործառույթն է հայության մարդկային, տնտեսական, ֆինանսական, մտավոր ներուժի կամ նրա հիմնական մասի կենտրոնացումը Հայաստանի Հանրապետության տարածքում, և այդ ներուժի անվտանգության ու բնականոն զարգացման ապահովումը:

4.2. Իր քաղաքացիների առաջ Հայաստանի Հանրապետության հիմնական պարտավորությունը նրանց անվտանգության և բարեկեցության ապահովումն է:

Քաղաքացիների անվտանգությունն ապահովելու պետական գործառույթը ներառում է.
- *պաշտպանություն արտաքին ագրեսիայից,*
- *պաշտպանություն ապօրինի , այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից, ոտնձգություններից, իրավունքների ոտնահարումներից,*

- պաշտպանություն բնական և տեխնածին աղետներից,
- պաշտպանություն համաճարակներից, հիվանդություններից,
- բնական պաշարների խելամիտ օգտագործումը, վայրի բնության պահպանությունը, նրան հասցված վնասի վերականգնումը:

Քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու պետական գործառույթը ներառում է.
- յուրաքանչյուրի առաջ սոցիալական պատասխանատվությունը,
- կրթության, առողջապահության հանրամատչելիությունը,
- ազատ տնտեսական մրցակցությունը, տնտեսական ազատ գործունեության հնարավորությունը,
- հանրահռչակ ազատությունների լիակատար կիրառման հնարավորությունը,
- հոգևոր, մշակութային պահանջների բավարարումը,
-հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը և նրանց սոցիալական ներառման ապահովումը,
- քաղաքային, մերձքաղաքային կանաչ գոտիների պահպանումը և բազմապատկումը, քաղաքաշինական միջավայրի մարդակենտրոն կազմակերպումը,
- սպորտի և ֆիզիկական կուլտուրայի մասսայականացումը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի տարածումը:

4.3. Հայոց բանակը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման հիմնական երաշխիքներից է: Բանակի մարտունակության ապահովման կարևորագույն պայմաններից է Արցախյան պատերազմի մասնակիցների նկատմամբ վարվող պետական քաղաքականությունը, սպայական և զինվորական անձնակազմի կրթական մակարդակը: Բանակի կարևորագույն գործառույթներից մեկը պետք է դառնա սպայական և զինվորական անձնակազմի ոչ միայն ռազմական գիտելիքների զարգացումը, այլև ընդհանուր կրթական մակարդակի բարձրացումը:

4.4. Անհատական ջանքը քաղաքական, տնտեսական, մարդու իրավունքների բնագավառում և հանրային կյանքի մյուս ոլորտներում զարգացման կարևոր գործոն է: Անհատի գործունեության բնագավառում պետության հիմնական գործառույթը սեփական քաղաքացիների ստեղծարար ընդունակությունների զարգացման և իրացման հնարավորություն ստեղծելն է հանրային կյանքի բոլոր բնագավառներում՝ գիտություն, մշակույթ, սպորտ, կրթություն, քաղաքականություն, տնտեսություն և այլն: Օրենքով չարգելված ցանկացած գործունեություն պետք է լինի հանրամատչելի: Յուրաքանչյուր ոք սոցիալական, գիտական, քաղաքական դիրքին պետք է արժանանա օբյեկտիվ-ստեղծարար ընդունակությունների իրացմամբ:

4.5. Քաղաքական ասպարեզում պետությունը գործադրում է անառարկելիորեն մրցակցային-ազատ ընտրական համակարգ, երբ երկրի քաղաքական կառավարման գործառույթները բաշխվում են ժողովրդի ազատ կամքի արտահայտմամբ, ինչը ստեղծում է հավասար հնարավորություններ երկրի կառավարման հավակնորդների համար: Ազատ

քաղաքական մրցակցությունը կարևոր երաշխիք է, որ երկիրը կունենա առավել արդյունավետ կառավարություն:

4.6. Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձևավորման գործում, տնտեսական գործունեության ոլորտում գործարար հմտություններ ունեցող առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար: Տնտեսական, գործարար դաշտը պետք է ձևավորվի ազատորեն՝ գործարար հմտությունների անաչառ մրցակցության, հովանավորչության բացառման պայմաններում: Սա նաև աղքատության հաղթահարման առանցքային պայման է, երբ գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր ոք պետք է բիզնես արդյունք ստեղծելու, ինքն իր և սեփական շրջապատի բարեկեցությունն ապահովելու հնարավորություն ստանա հավասար, մրցակցային պայմաններում:

4.7. Առաջնային խնդիր է տնտեսական մրցակցության համար իրական պայմաններ ստեղծելը. անհրաժեշտ է ձևավորել օրենսդրական և գործնական միջանցք՝ Հայաստանում «զրոյից» տնտեսական գործունեություն սկսելու իրական հնարավորություններ ձևավորելու համար: Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի բարձրացումը, մասնավորապես՝ նոսր բնակեցված մարզերի, սահմանամերձ տարածաշրջանների և ընդհանրապես Հայաստանի բնակչության թվի աճը:

4.8. Դատարանների անկախությունը ինչպես գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններից, այնպես էլ դատական իշխանության մարմինների համակարգում այլ դատական ատյանների և դատական պաշտոնյաների ազդեցությունից կենսական նշանակություն ունի ոչ միայն ժողովրդավարության կայացման, այլ նաև տնտեսական զարգացման համար: Այս առումով դատարանների նկատմամբ վստահության վերականգնումը առաջին հերթին իրենց՝ դատարանների և դատավորական համայնքի հոգածության խնդիր պետք է լինի, իսկ գործադիր և օրենսդիր իշխանությունները դրան ամեն գնով օժանդակելու և աջակից լինելու դերն ունեն: Անկախ դատական համակարգի առանցքային գործառույթը հասարակական-քաղաքական և տնտեսական մրցակցության, սեփականության և այլ իրավունքների պաշտպանությունն է:

4.9. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առաջնային խնդիրը բնակչության թվի աճն է. ըստ այդմ, առաջիկա 20 տարիներին ՀՀ բնակչության թիվը պետք է կրկնապատկվի: Այս խնդրի լուծման կարևորագույն միջոցներն են Հայաստանի Հանրապետությունից արտագաղթի դադարեցումը, Հին և Նոր Սփյուռքը ներկայացնող հայերի՝ դեպի Հայաստանի Հանրապետություն հայրենադարձության հարաճուն գործընթացի հարուցումը, ծնելիության աճը:

4.10. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը պետք է լինի

նախաձեռնողական, բազմավեկտոր և հայաստանակենտրոն: Այն պետք է միտված լինի տարածաշրջանային կայունությանը և համագործակցությանը: Գործընկերների հետ մեր հարաբերությունները պետք է կառուցվեն ինքնիշխանության վրա: Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքական շահերի, իսկ ներքին կյանքը՝ ժողովրդավարության վրա, և այս երկու սկզբունքները երաշխավորում են միմյանց: Հայաստանը չպետք է կատարի ընտրություն արևելքի և արևմուտքի միջև: Փոխարենը Հայաստանը պետք է դառնա երկխոսության և համագործակցության օրինակ և միջնորդ:

- Հայաստանը պետք է ակտիվորեն միջոցներ ձեռնարկի ԵԱՏՄ-ում իր անդամակցությունը առավել արդյունավետ դարձնելու համար:

- Հայաստանը պետք է հատուկ հարաբերություններ կառուցի երկու դրացիների՝ Իրանի և Վրաստանի հետ. այդ հարաբերությունները պետք է առավելագույնս դուրս լինեն աշխարհաքաղաքական հանգամանքների ազդեցությունից:

- Ռուսաստանի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Չինաստանի հետ Հայաստանի հարաբերությունների նպատակը արժանապատիվ հարաբերությունների հաստատումն ու ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունն է:

- Հայաստան-Թուրքիա հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց նախապայմանների:

4.11. Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման որևէ ծրագրի իրագործում հնարավոր է միայն Արցախի՝ բանակցային լիարժեք կողմի կարգավիճակի վերականգնմամբ, առանց որի համաձայնության կարգավորման որևէ տարբերակ չի կարող համարվել դե յուրե ընդունված: Միայն խաղաղ բանակցային ճանապարհը կարող է հանգեցնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կայուն լուծման: Լեռնային Ղարաբաղը պետք է որոշիչ ձայն և ներգրավվածություն ունենա իրական և տևական խաղաղության հաստատման գործընթացում: Արցախի կարգավիճակը, տարածաշրջանում խաղաղ բնակչության անվտանգությունը, ինչպես նաև ժողովուրդների իրավահավասարությունն ու ինքնորոշումը մեզ համար առաջնահերթություն են: Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման նպատակը տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումն է՝ հիմնված բոլոր հասարակությունների կարիքների բավարարման վրա:

4.12. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի անվտանգության կարևոր երաշխիք է. Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը պետք է շարունակվի մինչև համաշխարհային ճանաչում:

4.13. Ներքաղաքական ասպարեզում Հայաստանի առաջ ծառացած կարևորագույն խնդիրը ժողովրդավարության ինստիտուցիոնալ զարգացումն է, համաձայն ձևակերպման, որ ժողովրդավարությունը իշխանության խաղաղ, անարյուն, ընտրական ճանապարհով փոփոխությունն է, փոփոխության իրական հնարավորությունը: Ժողովրդավարության գործնական կիրառումը, ըստ այդմ, ընդդիմության իշխանության հասնելն է խաղաղ, ընտրական ճանապարհով, իշխանություն դարձած իշխանության հեռացումը իշխանությունից խաղաղ, ընտրական ճանապարհով և այդպիսի պարբերական մեխանիզմի կիրառումը՝ համաձայն ազատ, արդար, օրինական, վստահելի ընտրական համակարգի արձանագրած՝ ժողովրդի ազատ կամարտահայտման: Ուղիղ ժողովրավարության կառավարման մշակույթը պետք է ինստիտուցիոնալիզացվի համապատասխան գործիքակազմով, ինչպիսիք են համապետական և համայնքային հանրաքվեները: Կուսակցությունների ներքին ժողովրդավրությունը նույնպես կարևոր մեծանիզմ է ուղիղ ժողովրդավարության գործիքակազմում:

4.14. Քաղաքականությունը պետք է լինի հրապարակային. քաղաքական գործընթացների, դրանց բովանդակության ու մանրամասների վերաբերյալ հանրության առավելագույն իրազեկումը ժողովրդավարության կարևորագույն բաղադրիչ է, որն անհնար է իրագործել առանց խոսքի, մամուլի, ինտերնետի և եթերի ազատության: Հանրային, պետական հարցերի վերաբերյալ քաղաքական, հանրային բանավեճն անընդհատ գործընթաց է և չպետք է դադարի՝ դառնալով հանրային էներգիայի հարաճուն աղբյուր. այսօրինակ բանավեճի կարևորագույն հարթակն ազատ լրատվամիջոցներն են, հեռուստատեսային ազատ և բազմազան միջոցները, որոնց գոյության երաշխավոր լինելը ժողովրդավարական իշխանության առաջնային պարտավորությունն է: Այս ինստիտուտները պետք է դառնան հասարակական կարծիքի արտահայտման հարթակ, ինչը ընտրությունից ընտրություն ընկած ժամանակահատվածում երկրի կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցության կարևորագույն նախապայման է: Քաղաքացիական հասարակության ինքնավարության ու ինքնակազմակերպման բարձր աստիճանը կարող է հասունացած խնդիրների արագ լուծման գրավականը լինել: Պետությունը պետք է վստահելի գործընկեր լինի քաղաքացիական հասարակության համար: Պետության ու քաղաքացիական հասարակության համագործակցության հիմքում պետք է լինեն փոխշահավետությունն ու փոխլրացումը:

4.15. Օրենքները պետք է դառնան հանրային, անձնային, խմբային հարաբերությունների կարգավորման նոր ավանդույթների ձևավորման առանցք: Հարաբերությունների կարգավորման եղանակները, որ լայնորեն փոխ են առնվում հանցագործ աշխարհից՝ պետք է արմատախիլ արվեն հանրային հարաբերությունների բոլոր մակարդակներից. ոստիկանություն, դատարան դիմելը պետք է դառնան իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիքներ, հանցագործությունները կանխելը, ծանր և առանձնապես ծանր հանցագործության մասին հայտնելը պետք է լինի յուրաքանչյուր քաղաքացու գիտակցված պարտավորություն: Կարևոր է նաև քաղաքացի-իրավապահ մարմիններ վստահության և համագործակցության նոր մշակույթի ձևավորումն ու ամրապնդումը: Մեր երկրի

անվտագությունը լայն իմաստով փոխկապակցված է նաև ժողովրդավարության կայացման և տնտեսության զարգացման հետ:

4.16. Իշխանությունը պետք է ստանձնի հստակ քանակական պարտավորություններ: Պարտավորությունների կատարման ընթացքը պետք է լինի թափանցիկ և հանրության համար վերահսկելի: Իշխանությունը ստանձնած անձինք պարտավոր են քաղաքական պատասխանատվություն կրել հանրության առաջ ստանձնած պարտավորությունների չկատարման համար:

4.17. Կուսակցության նպատակներից է Հայաստանի ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, նրանց ազգային ինքնության և ավանդույթների պահպանման համար պայմանների ապահովումը:

4.18. Ոչ ոք չպետք է դառնա խտրականության կամ ատելության խոսքի թիրախ: Տարձայնությունները և բազմակարծությունը պետք է լինեն հանրային լայն երկխոսության առիթ՝ հանգելով համերաշխության և հանրային փոխվստահության:

4.19. Կրթությունն անձի երջանիկ, արժանապատիվ և բարեկեցիկ կյանքի բանալին է: Այն նաև հասարակության խնդիրներից շատերի երկարաժամկետ և համակարգային լուծման ուղին է: Կրթությունը սոցիալական արդարության հասնելու կարևորագույն գործիք է, որն ինքը պետք է լինի արդար: Կրթության բովանդակությունն ու ուսուցման մեթոդները պետք է համահունչ լինեն հանրահռչակված արժեքներին և սովորողներին տան ոչ միայն գիտելիքներ, այլև հմտություններ և կարողություններ՝ հետևելու և հասնելու այդ արժեքներին՝ արդարություն, ազատություն, իրավահավասարություն, սոցիալական պատասխանատվություն, համերաշխություն, սեր և երջանկություն: Այդ նպատակով կրթությունը նպաստելու է ստեղծագործ, լայնախոհ, նախաձեռնող, քննադատական մտածողությամբ օժտված, համալիր խնդիրներ ու հասարակական գործընթացներ վերլուծելու ունակ, խնդիրների լուծման համար համագործակցող, մարդու իրավունքներն ու ազատությունները հարգող, սոցիալապես պատասխանատու և ֆիզիկապես կրթված քաղաքացիների ձևավորմանը:

5. Կուսակցությունը գործում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների հիման վրա:

6. Կուսակցության անդամները կարևոր են համարում, որ քաղաքական գործունեության ֆինանսավորման աղբյուրները լինեն թափանցիկ, և ջանքեր են գործադրում Հայաստանում քաղաքական գործունեության ֆինանսական թափանցիկության մեխանիզմներ ձևավորելու համար: